ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծննդյան տարեթիվը՝ 13. 05. 1963

Ծննդավայրը՝ՀՀ,Արարատի մարզ,Զանգակատուն

Էլ. փոստ՝ Armenaraqsyan@mail.ru

Պատմական գիտությունների թեկնածու Արմեն Հովակիմի Կարապետյանը 1980 թ. լավ և գերազանց գնահատականներով ավարտել է Զանգակատան միջնակարգ դպրոցը։ 1982 թ. ընդունվել և 1987 թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պատմության և աշխարհագրության ֆակուլտետը։

1987–1988 թթ. աշխատել է Վայոց ձորի մարզի Ագարակաձորի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության և հասարակագիտության ուսուցիչ։

1988 թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրա (արտադրությունից կտրված) և այն ավարտել 1991 թ.։

1991 թ. ընդունվել է աշխատանքի Պատմության ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող, ապա երկարատև աշխատանքային գործունեության ընթացքում հասել է ավագ գիտաշխատողի պաշտոնին։

1995 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Արմենականների դերը արևմտահայության ազգային-ազատագրական պայքարում» թեմայով, և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։

Գիտական գործունեությանը զուգահեռ զբաղվել է նաև մանկավարժական-դասախոսական աշխատանքով։

Տարբեր տարիներին դասավանդել է հանրապետության պետական և ոչ պետական մի շարք ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ Երևանի պետական համալսարանում (1999–2015 թթ.), «Դավիթ Անհաղթ» համալսարանում (1995–1997

թթ.), Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում (1994–1995 թթ.), «Հր. Աճառյան» համալսարանում (2000–2003 թթ.), Գավառի պետական համալսարանում (1999–2000 թթ.), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (2002–2003 թթ.), Երևանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում (1997–1999 թթ. և 2018–2021 թթ.), Գորիսի պետական համալսարանում (2012–2016 թթ.), «Վիլյամ Սարոյան» համալսարանում (1997–2003 թթ.), Երևանի պետական ագրարային համալսարանում (2008–2009 թթ.), Երևանի մշակույթի համալսարանում (1999–2003 թթ.) և այլ բուհերում ու քոլեջներում:

2001–2004 թթ. եղել է Երևանի պատմության թանգարանի գիտական գծով փոխտնօրենը:

Երկու անգամ առաջադրվել է որպես ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու՝

- 1999 թ.՝ մեծամասնական ընտրակարգով, թիվ 34 ընտրատարածքից (Արարատի շրջան),
- 2007 թ.՝ «Նոր ժամանակներ» կուսակցության համամասնական ցուցակով (թիվ 22):

2004 թ. հանդիսացել է «Ազատագրում» հայրենասիրական հասարակական կազմակերպության համահիմնադիրներից մեկը:

2003 թ. եղել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի «Թանգարանային գործ» մասնագիտության ավարտական քննական հանձնաժողովի նախագահը:

Մասնակցել է «Վերապատրաստող դասախոս» ծրագրի շրջանակներում կազմակերպված դասընթացներին (2007 թ.):

ՀՀ լրագրողների միության անդամ է: Կարճ ժամանակով եղել է ԱԻՄ-ի «Անկախություն» պարբերականի և «Վիլյամ Սարոյան» համալսարանի ուսանողական թերթի խմբագիրը: Բազմազան թեմաներով մամուլում հրապարակել է հարյուրավոր հոդվածներ: Խմբագրել է գրքեր, համագործակցել «Հայկական հանրագիտարանի» հետ, ինչպես նաև տպագրվել «Ազգ», «Ազատամարտ», «Երկիր», «Голос Армении», «Հայաստան», «Հայ զինվոր», «Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Կրթություն», «Սյունյաց երկիր», «Հորիզոն», «Գիտություն», «Ձայն հայրենական», «Դրօշակ» և այլ պարբերականներում:

Պարգևատրվել է մի շարք հասարակական կազմակերպությունների պատվոգրերով, ինչպես նաև Պատմության ինստիտուտի և ԳԱԱ նախագահության գովեստագրերով:

Հանրապետության և արտերկրի հեղինակավոր հանդեսներում մինչև օրս հրապարակվել են նրա ավելի քան ինը տասնյակ գիտական հոդվածներ:

Մինչ օրս հրատարակվել են նրա հետևյալ գրքերը.

1. **«Վասն հայոց ոգու»**, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2006 թ., բանաստեղծությունների ժողովածու, 88 էջ:
2. **«Ընդհատված թռիչք»**, էսսե, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2009 թ., 96+28 էջ:
3. **«Պատմություն և ճակատագիր»**, հոդվածների ժողովածու, Երևան, «Լուսակն» հրատարակչություն, 2010 թ., 100 էջ:
4. **«Կարոտի և կապույտի երկիր Հայաստան»**, բանաստեղծությունների և հոդվածների ժողովածու, Երևան, «Մուսալեռ» հրատարակչություն, 2015 թ., 108 էջ:
5. **«Մ. Փորթուգալյանը և «Արմենիան» հայ ազգային-ազատագրական պայքարում»**, գիտական մենագրություն, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2019 թ., 322 էջ: